ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5599-Ա « 16 » նոյեմբերի 2026թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
16.11.2026թ.
հ. 5599-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Վահե Կարապետյան	Թ. Նազարբեկյան թաղամաս, հ.19/14	բնակելի տուն	Վահե Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող, Թ. Նազարբեկյան թաղամասի հ.19/14 հասցեում գտնվող բնակելի տան /վկ.հ.30092024-01-0092, հող 226.7քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 198.4քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Նազարբեկյան թաղամաս, հ.19/58	01013JBDLHHK	
2	Վահե Օհանջանյան	Աղբյուր Սերոբի փողոց, հ.5 շենք, հ.54	բնակարան	Վահե Օհանջանյանին սեփականության իրավունքով պատկանող, Աղբյուր Սերոբի փողոցի հ.5 շենքի հ.54 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.27102026-01-0364, ընդհ. բաժն. 1.0քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 40.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Աղբյուր Սերոբի փողոց, հ.5 շենք, բն.54/1	01033737XPHE	
3	Յուրա Մարչենկո /լիազորված անձ/ Մուշեղ Մանուկյան /սեփականատեր/	Հաղթանակ թաղամաս, հ.66	հողամաս	Մուշեղ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ թաղամասի հ.66 հասցեում գտնվող հողամասին /հիմք՝ վկ. հ.23062025-01-0293 և Երևանի քաղաքապետի 12.10.2026թ. հ.4923-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 1-ին փողոց, 8-րդ նրբանցք, հ.8	01073JCX5UUL	
4	Կարեն Պողոսյան և Նարինե Հակոբյան	Նիզամիի փողոց, հ.26 շենք, հ.8	բնակարան	Կարեն Պողոսյանին և Նարինե Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Նիզամիի փողոցի հ.26 շենքի հ.8 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ. 29092026-01-0038, ընդհ. բաժն. 1.3քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 52.1քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Նիզամիի փողոց, հ.26 շենք, բն.8/1	01113DQTRUKR	

5	Սվետլանա Նազարեթյան, Լենա և Հայկ Հակոբյաններ	Նոր Արեշի 35-րդ փողոց, հ.127/3 շենք, հ.172, 172ա	բնակարան	Սվետլանա Նազարեթյանին, Լենա և Հայկ Հակոբյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/3 շենքի հ.172, 172ա հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.19102026-01-0217/ բաժանման հատակագծով առանձնացվող 16.65քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Նոր Արեշ 35-րդ փողոց, հ.127/3 շենք, բն.172/1	01053TCU3KXL	
6	Սվետլանա Նազարեթյան, Լենա և Հայկ Հակոբյաններ	Նոր Արեշի 35-րդ փողոց, հ.127/3 շենք, հ.172, 172ա	բնակարան	Սվետլանա Նազարեթյանին, Լենա և Հայկ Հակոբյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/3 շենքի հ.172, 172ա հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.19102026-01-0217/ մնացորդային 16.3քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Նոր Արեշ 35-րդ փողոց, հ.127/3 շենք, բն.172	010539TWHSNT	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**